Է. ՏԱՐԻ 1916 — ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 29 ՄԱՐԵՐԻ 4382 — Հ. Տ. 5 ՅՈՒՆԻՍ 1890 — Ն. Տ. 17 ՅՈՒՆԻՍ 1890 — ՀԻՃՐ. 1 ԶԻԼԳԱՏԻ 1307 — ԵՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՉ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ Galata, Նորատունկեան-խան

درعلیه‌ده غلطه‌ده نورادونکیان خانده آره‌وك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար 3 ամսեան դրամագլուխ տարեկան	160
» » » » »	80
» » » » »	40
Օտար » » »	200
» » » »	100
Ամսոյ » »	56
» » »	28
Թուրք.	Խորհրդ Գրչութեան վրայ 6
Նոր.	Ամսոյ համար դրութիւն եւ լրագիր՝

Les annonces sont reçues AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 5 ՅՈՒՆԻՍ, 1890

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԶԱՐԴԱՑՈՒՄ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ ԿԱՆԱՑ�re

Երկու դէպքեր այս օրերս մասնաւոր կարեւորութիւն մը տուին իգական սեռին բարձրագոյն կրթութեան և քաղաքական իրաւանց խնդրոյն։ Օր. Ֆիլիփիա Կառէթ Ֆօսէթ Բէմպրիճի Համալսարանին բարձրագոյն յաջողագիտական ուսմանց մրցման մէջ առաջնակարգ հանդիսացաւ, և Ռումանուհի մը, Օր. Սարմիղա Պիլչէսքօ, Փարիզի Իրաւագիտական Համալսարանին մէջ Իրաւագիտութեան Վարդապետի (Doctorat en droit) քննութիւնն անցուց մեծաւ յաջողութեամբ։

Օր. Ֆօսէթ դուստրն է Անգլիոյ թագաւորական հանգուցեալ նախարարը և քաղաքական տնտեսագիտութեան դասախօս Պ. Հէնրի Ֆօսէթի, որ թէեւ կոյր, բայց նշանաւոր գիտնական մ'էր, անգամ Պ. Կլատսթոնի երկրորդ նախարարութեան։ Օր. Ֆօսէթի մայրն ալ գրագէտ և գիտնական է միանգամայն։ Շատ բաներ գրած է ի պաշտպանութիւն կանանց իրաւանց, և իր ամուսնոյն հետ մէկտեղ քաղաքային տնտեսութեան դասագիրք մը հեղինակած է։

Բէմպրիճի Համալսարանին մէջ սովորութիւն է որ յաջողագոյն և ընտրելագոյն ուսումնասիրաբար իրենց ուսման ընթացքը չկնքած՝ մասնաւոր քննութիւններ կամ մրցումներ կը կրեն մաթէմատիքի բարձրագոյն ճիւղերուն մէջ, որք մասնաւորապէս կը մշակուին ի Բէմպրիճ։ Մրցման մէջ առաջին հանդիսացողն օրուան դիցազն է։ Իւր առջեւ ասպարէզը բաց է մինչեւ ի Խաչաբանութիւն, ի նախագահութիւն Լորտերու Ժողովոյն (դատական նախարարութիւն), կամ յարքեպիսկոպոսութիւն Բէնթբրիի, ըստ իւր ընտրելիք ճիւղին։ Ուսանողուհիք չեն կրնար ատոնցմէ ոեւէ մէկ ստանալ այս Համալսարանին մէջ, բայց վերջերս պաշտօնական զիջում մ'եղաւ իրենց, որով կարող են քննութեանց մասնակցիլ։ Այս տարի եւս թէեւ պաշտօնական Senior Wrangler կամ առաջին հանդիսացող ուսումնասիրաբարն արական սեռէն է, բայց քննիչք յայտարարեցին որ եթէ մրցակցող ուսանողուհիներն եւս հաշուի դնելու արտօնութիւն ունենային, առաջնութիւնը կը պատկանէր Օր. Ֆօսէթի։

Բէմպրիճի Համալսարանը վերջին ժամանակներս հաստատեց իգական երկու կրթարաններ, ուր ուսանողուհիք կրնան ատոնցմէ ընդունիլ։ Այս երկու կրթարանաց ուսանողուհիք փայլուն կերպիւ տօնեցին Օր. Ֆօսէթի շքեղ յաղթանակն, որ կ'ապացուցանէ թէ չափագիտական ամենանուրբ եւ դժուարին ուսման մէջ իսկ, օրք առնական կորովի մտքին վերապահուած կը կարծուէին, օրիորդ մը կարող է ի կիր դալ երիտասարդներու հետ եւ յաղթել անոնց։ Այս յաղթութեան վրայ, Բէմպրիճի Համալսարանը կը հարկադրուի իգական սեռին եւս տալ այն արտօնութիւն զոր ցարդ կը զլանար, այն կարծեօք թէ չափագիտական ուսմանց յոգնեցուցիչ հաշիւք իգական մտաց համար չեն։

Կ'երեւի թէ հանրային գործունէութեան ամեն ճիւղերուն մէջ յեւրոպա Անգլիոյ բաժնին կ'ինայ արական և իգական սեռերու հաւասարութեան փորձերն ընել։ Արդէն գրպրոցական խորհրդոց մէջ և հանրային աղքատախնամ վարչութեան խորհրդոց մէջ անդամուհիք բազմելու իրաւունք ունին ըստ օրինաց։ Կանայք կարող են նաեւ քուէ տալ քաղաքային խորհրդոց ընտրութեան համար։ Կ'աշխատուի գաւառային ժողովոյ մէջ եւս մուծանել անդամուհիներ։ Թէ՛ պահպանողական և ազատական կուսակցութեան մէջ հզօր շարժում մը կայ խորհրդարանի անդամոց ընտրութեան համար եւս իրաւունք տալ իգական սեռին, դէթ այն օրիորդաց և կանայց որք անկախաբար կ'ապրին, ամուրի կամ այրի, իրենց քրտանց վաստակով, կամ իրենց եկամտով։

Երեք տարի յառաջ Օր. Ռամսէյ Դպրութեանց մրցման մէջ առաջնակարգ հանդիսացած էր Բէմպրիճի Համալսարանին Թրինիթի Քոլէճին մէջ, Օր. Ռամսէյ և Օր. Ֆօսէթի իմացական յաղթանակք դրապէս կը նրպաստեն կանանց իրաւանց դատին վերջնական յաջողութեան։

Դանք ի Փարիզ։

Առաջին անգամն էր որ օրիորդ մը Փարիզի Իրաւագիտական Համալսարանին մէջ Փաստաբանութեան (Licencié) կամ Վարդապետութեան քննութիւն կ'անցուներ։ Ամեն տարի շատ մը աղջիկներ կը հետեւին Փարիզի Դպրութեանց, Դիտութեանց և Բժշկութեան Համալսարաններուն ընթացից, և վերկայեալ կ'ելնեն։ Բայց իրաւագիտական ճիւղին հակում չեն ցուցներ։ Օր. Սարմիղա Պիլչէսքօ 23 ամեայ երկայնահասակ թխորակ և յոյժ գեղեցիկ աղջիկ մ'է, շատ ալ ամչկոտ։ Իւր բարեկեցիկ ծնողք ուզեցին առաջնակարգ կրթութիւն մը տալ իրեն։ Միջակարգ վարժարանի ուսումնարանն ըրաւ իւր հօրենական տան մէջ, Պուքրէշի Լիսէին և Համալսարանին լաւագոյն ուսուցչաց ձեռօք, և 17 տարեկանին մէջ, Դիտութեանց և Դպրութեանց պակաւորի (Պաշիէ) յաջող քննութիւնն անցուց ի Փարիզ, միանգամայն պարապելով երաժշտութեան, և առաջին մրցանակն ստացաւ դաշնակի համար։ Ի Փարիզ, 1884ին, միանգամայն թէ՛ Դպրութեանց և թէ Իրաւագիտութեան Համալսարաններու ընթացից հետեւիլ ուզեց։ Իրաւագիտութեան ուսումն իւր հօր կամքն էր։ Դպրութեանց Համալսարանն աղջկերուհի ընդունեց զինք, իսկ Իրաւագիտութեան Համալսարանին մէջ դժուարութեան բախեցաւ։ Դասախօսից յատուկ ժողով դումարեցաւ, և յետ երկար վիճաբանութեանց, դասախօսից մեծամասնութիւնն հաւանեցաւ որ Օր. Պիլչէսքօ իրաւագիտական ուսման եւս կարենայ պարապիլ։ Ամենայն կանոնաւորութեամբ և աշխատասիրութեամբ աշակերտեցաւ, իւր փաստաբանական քննութիւնն յաջողապէս անցուց, և թէպէտ ի Փարիզ իրաւագիտութեան պարապողներ փաստաբանական քննութիւնն անցուցնելէ ետքը կը մեկնին, բայց գեղանի Ռումանուհին մնաց, բարձրագոյն աստիճանն հասնելու հաստատ դիտաւորութեամբ։ Իւր մայր միշտ իրեն կ'ընկերանար Համալսարանին մէջ։ Վարդապետութեան վկայականին համար օրիորդն 506 էջէ բաղկացեալ ստուար աշխատութիւն մը հեղինակած էր, սանիթին վրայ։ «Մօր օրինական վիճակն հռոմէական օրէնսդրութեան և ֆրանսական օրէնսդրութեան մէջ», ի սկզբան 700 էջէ կը բաղկանար աշխատութիւնը, բայց իւր դասախօսից խորհրդով զեղչեց 200 էջն, ուր սերնդականութեան վրայ կը ճառէր։

Օր. Պիլչէսքօ այս հեղինակութեամբ կը պահանջէ որ «կինն ի վիճակի դրուի ո՛չ թէ առն իրաւանց ստանձնութիւն ընելու, այլ առն հաւասար ցոյց տալու ինքզինք՝ անոր քով կատարելով իրեն վերապահեալ պաշտօնն։ Այս պաշտօն միայն որդեծնութիւն չէ, այլ մանաւանդ կրթել զարգացնել զանոնք օրք այր պիտի լինին»։ Ակնարկելով կնոջ քաղաքական իրաւանց, կ'ըսէ.

«Կինն, որպէս այրն, անդամ է քաղաքացիական կամ քաղաքական ընկերութեան մը, Պետութեան մը. կինն եւս քաղաքացուհի է ուրեմն, և եթէ այս բառ ծիծաղելի եղած է ծայրայեղութեամբ, իրը ծիծաղելի չէ սակայն, և ճշմարիտ պիտի մնայ միշտ։

«Թէ կինն արտաքին և հանրային գործառութիւններն այր մարդուն թողու, շատ լաւ. բայց կնոջ այս անգործութիւն անտարբերութիւն չի կրնար լինել։

«Եւ իրօք, կինն ալ առն չափ շահ ունի օրինաց պատրաստութեան, հանրային գործոց վարչութեան և արդարութեան գործադրման մէջ։ Բայց կը խորհինք թէ կանանց չի վայլեր այս գործոց ուղղակի մասնակցիլ, յորս ապաքէն իրենց բնական ներկայացուցիչներն ու փոխանորդներն ունին յանձին իրենց հայր, եղբարց, ամուսնոց և որդւոց։»

Իւր եզրակացութեան մէջ, Օր. Պիլչէսքօ կը պահանջէ օրինական կարգ մը բարւոքումներ, «որպէս զի զաւակին հանգէպ մայրն հօր հաւասար կացութիւն ունենայ, ամեն անգամ որ երկոքին ամուսնիք միանգամայն ներկայ չլինին, և երբ՝ հետեւապէս՝ այրական իշխանութիւնը խնդրոյ ներքեւ չի մնար»։

Ռումանուհին Պուքրէշ կը վերադառնայ, ռումանի փաստաբանաց կարգին մէջ արձանագրուելու նպատակաւ, «ո՛չ թէ ես ինքս դատարանաց առջեւ ելնելու և փաստաբանելու համար, որովհետեւ իմ վեհերոտութիւնս արդէն այդ համարձակութիւնը կը զլանայ ինձ, բայց կը փափաքիմ անձնական փորձով հաստատել տալ միանգամ ընդ միշտ սա սկզբունք թէ կանայք փաստաբան կրնան լինել, որպէս զի այն օրիորդք որք ինձ չափ բարեկիցիկ չլինելով պէտք ունին իրենց ապրուստին համար աշխատելու, կարենան օր մը փաստաբանական արուեստն ի գործ դնել՝ առանց կառավարական դժուարութեանց»։

Փարիզի Իրաւագիտական Համալսարանին ընթացից կը հետեւին այժմ ժամն երկու օրիորդք, մին ֆրանսացի, միւսը ռուս։ Երկուքն ալ արդէն ստացած են փաստաբանական աստիճանը։

ԹՈՒՐՔԻԱ, ՖՐԱՆՍԱ, ԱՆԳԼԻԱ ԵՒ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Հեւագիրը ծանոյց Ֆրանսայի արտաքին գործոց Նախարար Պ. Ռիպոյի բանախօսութիւն Եգիպտոսի պարտուց փոփոխման խնդրոյն վրայ։ Պ. Ռիպօ գործին սեպհականական մասը բացատրելէ յետոյ, որոյ վրայ պէտք եղած տեղեկութիւնք արդէն տրուած են այս սիւնակաց մէջ, քաղաքական կողմին բացատրութեան համար ի մէջ բերաւ վերջաբանն այն ծանուցագրոյն զոր Ֆրանսական կառավարութիւնը ղրկած է Տէրութեանց՝ Եգիպտոսի թէ՛ սեպհականական և թէ քաղաքական խնդրոյն վրայ։

«Այժմեան օտար գրաւումը, նոյն ինքն անգլ. կառավարութեան հանդիսաւոր յայտարարութեանց համեմատ, առժամեայ է լոկ, և պէտք է դադրի՝ յեգիպտոս բարեկարգութեան հաստատուելուն պէս։

«Հանրապետութեան կառավարութիւնը կը մտածէ թէ այդ պայմանը կատարուած է այսօր, և Եգիպտոս այժմէն կարող է գոհացնել բարեկարգ կառավարութեան բոլոր այն պայմաններ որք՝ յաչս Անգլիոյ՝ տեղի կուտան անգլ. զօրաց ներկայութեան Օմ. Տէրութեան այս մասին մէջ։

«Տէրութիւնք պէտք է համամիտ լինին մեզ հետ, և եգիպտական պարտուց փոփոխումէն յառաջ եկած խնայութիւնք պէտք է քսակ կարի դարձուին Եգիպտոսի կառավարութեան ընձեռելու նիւթական միջոցներ, որպէս զի Անգլիա իւր զօրքը քաշելու համար տուած խոստումը կարենայ դրդագրել, (ներքնապէս զօրացած տեսնելով զեղիպտոս)։

«Ընդունելի չէ որ այս պարտուց փոփոխումէն յառաջ եկած խնայութիւնք, որք եւրոպեան դրամագլուխէն պահանջուած զոհողութիւն մ'են ապաքէն, անուղղակի ծառայեն նեղոսի հովտին մէջ երկարաձգելու օտար գրաւումն։

«Այս գիտողութեանց համաձայնելու համար բաւ է աչքէ անցունել այն փայլուն պատկեր զոր անգլ. կառավարութիւնն և իւր գործակատարք գծած են վերջերս՝ բացատրելով Եգիպտոսի մէջ տիրող ապահովութիւնն և բարգաւաճումն։

«Այս խնդրոյ վրայ մեր համոզմունք փոփոխում չեն կրած բնաւ։ Նոյն նրպատակաւ (անգլիական զօրաց մեկնումը փութացնելու նպատակաւ) է որ ֆրանսական կառավարութիւնը խորհուրդ տուաւ որ եգիպտական կառավարութեան առաջարկած սահմանափակ փոփոխման հասոյթք դործածուին յատուկ դրամագլխոյ մը կազմութեան, որոյ շնորհիւ եգիպտոս իւր զինուորական այժերն աւելցնէ, և ինքնին կարող լինի իւր սահմանագլուխները պաշտպանել, ներքին կարգ և կանոն պահպանել երկրին մէջ, որով և փութացնել օտար զօրաց մեկնումը։

«Բայց Եգիպտոսի կառավարութեան իւր պարտուց փոփոխման վրայ ինչ ինչ առաջարկներ մատուցանելէն ի վեր իրերը փոխուած են բաւական։ Թուրքիա, որ ուրիշ ամեն Տէրութենէ աւելի հոգածու է զի օտար զօրքեր մեկնին Եգիպտոսէն, փութաց հարցունել Անգլիոյ թէ ի՞նչ են այս մասին իւր վերջնական դիտաւորութիւնք։ Լոնտոնի դահլիճը չպատասխանեց դեռ։ Կը յուսանք որ իւր պատասխան դոհացուցիչ լինի թէ՛ Վեհ. Պուլթանին կառավարութեան և թէ այն Տէրութեանց համար որք ստորագրած են 1885ի յայտարարութիւնն։

«Այս պայմանաց մէջ, Ֆրանսա պէտք չտեսաւ Եգիպտոսի պարտուց փոփոխումն ստորագրելու համաձայնութեան մը՝ փոփոխումէն յառաջ դալիք խնայութեանց գործածման կերպին վրայ։ Այս վերջին կէտս վրայ յառաջիկային բանակցութիւնք կրնան կատարուիլ Անգլիոյ և միւս Տէրութեանց հետ։

«Անգլ. կառավարութիւնը քաջ գիտէ որ եթէ փափաքող ենք իրեն հետ մտերմական յարաբերութիւններ տանելու, եթէ գժտութեան պատճառ չենք ուզեր թողուլ ֆրանսական եւ անգլիական երկուց ազգաց մէջ որք յամենայնի համաձայն ընթանալու կոչուած են, բայց և այնպէս առանց բաղդի չենք կրնար թողուլ որ Անգլիա հաստատուի Նեղոսի հովտին մէջ և Սուէզի ջրանցին վրայ, յորս բռնադակ ելեւոպա չահ ունի, և Անգլիա ո՛չափ յամառի իւր խոստման դործադրութիւնն յապաղեցնելու, մեք եւս նոյնչափ պիտի յամառինք իւր խոստումն իրեն յիշեցնելու։»

Ժողովը ջերմագին ծափահարութեամբ ընդունեց Պ. Ռիպոյի բացատրութիւնները։ Բայց ինչպէս Ֆրանսայի նախարարն ինքն եւս ըսաւ, խնդիրն այժմ կախեալ ունի Թուրքիոյ եւ Անգլիոյ միջեւ վերսկսեալ բանակցութիւններէն, ի մասին անգլ. զօրաց ներկայութեան յեգիպտոս։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ ԵՒ ԶՐՈՅՑՆԵՐ

Պարսկաց Շահն Հռոմայ դեսպանութիւնն առաջարկեց Վսեմ. Մելքոն Խանին, որ կը յիշուի թէ Ն. Վեհափառութեան յԱնգլիա ուղեւորութենէն ետքը վեճ ունեցած էր Պարսկաստանի Նախարարապետին հետ և պաշտօնանկ եղած։ Բայց Մելքոն Խան քաջառողջ վիճակի մէջ չէ, և իւր հանգստեան պէտք ունենալն յայտնելով, հրաժարեցաւ առաջարկեալ դեսպանութենէն։

—Դերմանիոյ Կայսրուհին հարսանիքի բռնուած է, բայց հիւանդութիւնը կանոնաւոր ընթացքի մէջ է, և չունի երկիւղալի հանգամանք։

—Արեւելեան Ափրիկէի փորթուկեզ հերոս Սերիա Փինթոյի ժողովրդականութիւնն անքուն կը թողուր ուրիշ փառասէր փորթուկեզ մը՝ Սիլվա Փորթօ, որ Արեւմտեան Ափրիկէի կողմն արշաւանք մը կազմեց։ Դժբախտապէս, ի Պիհէ ծերը պարտութեան մը մատնեցաւ բնիկներուն կողմէ, պարտութեան որոյ պարագային վրայ մանրամասն տեղեկութիւն չունինք դեռ։ Բայց Պ. Սիլվա Փորթօ չհանդուրժեց պարտութեան, և ինքնասպան եղաւ՝ վաւօդի տակառներ բռնկցնելով և օդն հանելով իւր տուն։ Ինքն այ Փորթուկալի գրոյն մը մէջ փաթթուած մեռաւ։

—Բիսմարքին իշխանուհին հեռագրեց իւր որդւոյն (ըստ տեղեկութեանց Մա. Օրէ-Դը-Լի) թէ մէկ, եթէ ոչ երկու, Տէրութեան ճանչցնել տալու վրայ է իրաց արդի վիճակը։

—Ի Վրացա, պուլկար բանաստեղծ Խրիսթօ Պոթէվի ի պատիւ տրուած հանդէսին մէջ, իշխանն այս խօսքերն արտասանեց։ «Այն օրն ուր ընդունեցի Պուլկարիոյ իշխան լինելու սուրբ պաշտօնն, իմ ժողովրդեանս երջանկութիւնը, զարգացումն և մեծութիւնն եւեթ ի մտի ունեցայ։ Թուցէ նոր պայքարներ ունենանք մղելու՝ երկրին կատարեալ միութիւնն ի դլուխ հանելու համար։ Բայց ձեր հայրենասիրութեան և իմ բանակիս քաջարութեան շնորհիւ ամեն դժուարութեան կը յաղթենք։»

—Աւստրիոյ-Հունդարիոյ ծովային նախարար Նեթէրնէք ծովապետ Մաճառաց Պատուիրակութեան ժողովոյն մէջ յայտարարեց թէ՝ Վիլհելմ Կայսեր հրաւէրին համաձայն՝ աւստրեւմաճառ նաւատորմի մը գերմանական ջուրերը պիտի դրկուի, (ինչպէս պիտի դրկուի նաեւ անդլիական նաւատորմի մը,) գերմանական նաւատորմին մեծ ուազմափորձերուն առթիւ։

—Ազգաւ գերման գնդապետ կոմս Փֆայլ, որ 13 տարիէ հետէ ռուսական բանակին մէջ կը ծառայէր, այս օրերս թողուց ռուսական հպատակութիւնն ու ծառայութիւնն, և Գերմանիոյ ծառայութեան մէջ մտաւ, ուր՝ ի Պերլին՝ սպայակոյտի մէջ պաշտօնի կոչուեցաւ։ Այս դէպք շատ դրդռեց Ռուսերն, և ռուս լրագիրք դիտել կուտան թէ գնդ. Փֆայլ ռուս բանակին ամեն գաղտնեաց խիստ մտէն տեղեկացած լինելով, կարող է Գերմանիոյ տալ այնպիսի տեղեկութիւններ զորս Գերմանիոյ օ՛չ մէկ զինուորական կցորդ կրնար ձեռք բերել։ Ռուս բանակաց մէջ հազարաւոր Գերմաններ կան, զորս հետեւապէս թշնամի կը նկատեն ռուս լրագիրք, պահանջելով որ այլ եւս զինուորական կարեւոր պաշտօններ չյանձնուին ցեղով գերման եղողներուն։

—Ի Նիւ-Փաուանլէնտ, սուրբ ուրբաթ, կզզեցիք կը մերժեն անգլ. դրօշն, որ, կ'ըսեն, անկարող է զիրենք պաշտպանելու։ Դիմաւոր պանդոկներ, խանութներ և ձկնորսանաւեր ամերիկ-

---

—(19)—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼԲԻ

ՕԳԴԱՎ ՖԷՕՅԷ

ԱՆԴԱՄ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻՈՅ

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԻ ՊԱՏԻՒ

Այն օրն ուր տիկին տը Մոնդոռան Պէտդոբիսի վրայ պարտք դրած էր Բիէռրոնի համար ունեցած սիրոյն վերջնական զոհողութիւնը, իրօք անկից խլած էր զոհողութիւնը, որով որբուհին կը հանմիակ շարժառիթն որով մեծ վարած չուտ կենդուրժէր անոր մօտ վարած չուտ կենցաղին։ Այդ վայրկեանէն սկսեալ, խուլ զայրոյթի դիւրահասկնալի զգացումը զոր մանկամարդ աղջիկը կը սնուցանէր իր դաժան պաշտպանուհւոյն նկատմամբ, այդ զգացում այլ կրքոտ հոգւոյն մէջ ճշմարիտ սոսկման մը փոխուած էր։ Պառոնուհւոյն տեսքն իսկ նողկալի էր իրեն։ Հաստատապէս որոշած էր բաժնուիլ անկից, եւ իր մեկնմանը ժամուն եւ օ՛ր երթալուն ընտրութեանը վրայ կը վարանէր միայն։ Իր առաջին մտածումն եղած էր, ինչպէս կը յիշուի, տեսակ մը անձնասպանութեամբ թաղուիլ ամէնէն խրոնատարոյ կրօնաւորուհեաց միաբանութեան մէջ։ Վերստին խօսած էր իր բարեկամուհւոյն՝ տ'էմառէ դերկոմուհւոյն՝ նամակներուն վանքը մտնելուն եւ նամակներուն վանքը մտնելուն վրայ, եւ անկեղծապէս կը պատրաստուէր այդ բանին՝ ջանալով դէպի երկինք փոխադրել իր սէրն որ այլ եւս երկրային ոեւէ ապագայ չունէր։ Բայց աւելի դիւրին է զոհողութիւն մը ընել քան յարատեւել այդ զոհողութեան մէջ։ Ցորչափ աւելի դրականապէս կը մտածէր այդ բանին վրայ, հէգ աղջիկն կենաց եւ աշխարհի համար ունեցած սիրոյն մէջ, իր կորովի և ծագկափթիթ երիտասարդութեանը մէջ դիմադրութիւններ կը գտնէր որք կարի ցաւատանջ կ'ընէին ամէն բանէ մտնջենական հրաժարումը... Եւ սակայն ի՞նչ ընել, ո՞ւր երթալ։

Ֆապրիսի նամակն և յայտարարութիւնը յանկարծակի վրայ հասան, իր այս վշտագին անտուգութեանց մէջ։ Նախ մեծապէս զարմանալով եւ մինչեւ իսկ վիրաւորուելով, ուզեց սակայն մէկ քանի ժամ խորհրդածել։ Իր սիրան ապատամբեցաւ իրեն դէմ։ Բայց վերջապէս, այն ծայրայեղ կացութեան մէջ յորում կը գտնուէր, ի՞նչպէս չնեռուիլ այդ ապաստանարանին մէջ, որ պատուաւոր էր, որ սիրալիր և անձնուէր ձեռք մը կը կարկառէր իրեն։ Իրեն պէս նաւարեկեալի համար, գոնէ կեանքն էր այդ։ Եթէ ոչ երջանկութիւնը։ Մանաւանդ իր ծանրաբեռն գերութեան ապահով և անմիջական վախճանն էր։ Բաց ասոնցմէ, շատ լաւ գիտէր որ իր ամուսնութեան և մեկնման լուրը կարի անհանգոյ պիտի ըլլար տիկին տը Մոնդոռանի, և այս բանս անոր ծանուցանելու հանգոյն օրիորդ տը Սառատոնի մէջ կը գտնէր ամէն բուռն ըզսրտին մէջ կը գտնէր ամէն բուռն ըզգացումը դուցէ որ կայ աշխարհիս մէջ, կնոջ մը ատելութիւնն ընդդէմ ուրիշ կնոջ մը։

Այդ միջոցին, տիկին տը Մոնդոռան խաղաղորէն իր միջօրէի հանդիստը կ'առնուր իր մեծ սրահին կից առանձնոցի մը մէջ։ Ընդհանրապէս ծանր մարսողութիւն եւ դաժան զարթնում ունէր։ Գէպդոբիսի ներս մտնելը տեսնելուն պէս.

«Ինձի այդպէս կուգայ որ, սիրելիս, ըսաւ, շատ ժամանակ կ'անցուցիք ձեր դասատուին քովը։ Արդէն լրագրիս կէսը կարդացի... աչուքներս ցաւ առին։ Ա-ուէք... Այլ Ե-ոյէն սկսեցէք... կամ մանաւանդ չէ, թերթոնը կարդացէք... տեսնենք ի՞նչ կ'ըլլայ այդ զարմանալի դքսուհին, զոր հեղինակը գեռնախնձոր ծախող կնոջ մը պէս կը խօսեցնէ։ Է՛հ, ինչո՞ւ կեցեր էք, չը կարդա՞ք։

—Ներողութիւն, տիկին, ըսաւ մանկամարդ աղջիկը ծայրագոյն քաղաքավարութեամբ, կրնա՞մ նախ և առաջ մէկ քանի խօսք ըսել ձեզի։

Պառոնուհին անոր նայեցաւ տարտամ անհանգստութեամբ մը։

—Ի՞նչ կայ որ, ըսաւ չորութեամբ։

—Տիկին, շարունակեց Պէդոբիս, թող կուտա՞ք ինձ յիշեցնել այն խօսակցութիւնը զոր միատեղ ունեցանք ձեր սենեկին մէջ, տասնեւհինգ օր առաջ։ Այն ատեն ինձ ըսիք որ եթէ ազնուական մարդ մը, սրտի տէր մարդ մը ամուսնութեան խնդրէ զիս, ո՛չ միայն ոչ մէկ դժուարութեան պիտի հանդիպէի ձեր կողմէն, այլ և կրնայի վստահ ըլլալ ձեր ամէնէն փոյթ ունենալ ինձի վրայ։ Այս խօսքերը, տիկին, այնչափ թանկագին էին ինձի համար որ անկարելի էր մոռնալ զայնս։ Դուք իսկ զանոնք յիշելու բարութիւնը կ'ունենա՞ք։

Պառոնուհին, որ դժուարաւ չէր չփթիր, անձին տիրութիւնը կորսնցուց այս խօսքերուն ի լուր, և գրեթէ թոթովելով էր որ պատասխանեց։

—Աստուած իմ... կարելի է... այո՛։ Ասոր մօտ խօսք մը զուրցած ըլլալու եմ... բայց ինչ ինչ պայմաններով...

—Ճշմարիտ է, տիկին, մէկ քանի պայմաններ կը դնէիք։ Արդարեւ երկու պայման կը դնէիք ձեր սիրայօժար աջակցութեան։ առաջինն այն էր որ ձեր եղբորդին ի բաց առնլու էր այն անձանց շարքէն որոնցմէ կրնայի ընտրել իմ ամուսինս։ յարգեցի այդ պայմանը... երկրորդը, տիկին, այն էր որ խոստում մը չպիտի տայի առանց կանխաւ ձեզի իմաց տալու։ և հիմակ այս բանիս համար եկած եմ։

—Լաւ ուրեմն, մտիկ կ'ընեմ։

—Տիկին, շարունակեց օրիորդ տը Սառատոն նոյն կատարեալ քաղաքավարութեան չեչտով, այն պարագայն զոր ինձ համար կանխատեսելու և փափաքելու բարեկամութիւնն ունեցած էիք, այսօր կը ներկայանայ։

—Ա՜հ։

—Եւ կուզամ խնդրել ձեզմէ որ ընդունիք այն ամուսնութեան խնդրանքը որով Պ. Ֆապրիս կը հանի զիս պատուել։

—Ֆապրիս կնութեա՞ն կը խնդրէ զձեզ։

—Այո՛, տիկին։

—Ինձի այնպէս կուգայ որ ամէնէն առաջ ինձի դիմելու էր... Պառաջնութեան ամէնէն տարրական օրէնքն այսպէս կը պահանջէր։

—Անշուշտ այդպէս պիտի ընէր, տիկին. բայց աւելորդ համարեց զձեզ ծանրացնել այս առթիւ՝ դեռ ապահով չեղած իմ անձնական զգացումներուս վրայ... որք ամէն բանէ աւելի կարեւորութիւնն ունէին իրեն համար։

—Եւ այս ամուսնութիւնն հաճո՞յ է ձեզ։

—Այո, տիկին, Պ. Ֆապրիս պարկեշտ մարդ մըն է և տաղանդի տէր մարդ մը, որուն անունը կրելուս համար երջանիկ պիտի ըլլամ։

—Դիտե՞ք, կ'ենթադրեմ, թէ որու կը յաջորդէք... առաջին անգամ լուացարար աղջկան մը հետ ամուսնացած է։

—Կը ներէք, տիկին, ծագկանկարիչ աղջկան մը հետ։

—Միեւնոյն բանն է... Շատ անպիտան մարդիկ պիտի գտնէք այդ ընկերութեան մէջ։

—Բաւական երջանիկ պիտի համարիմ ինքզինքս. տիկին, եթէ յարգանքով վարուին ինձ հետ։

—Եւ այսպէս... զիս հո՞ս թողուք երեսի վրայ, մոռնալով ինչ որ ըրած եմ ձեզի համար այն օրէն ի վեր յորում քովս առած եմ զձեզ իբր բարեկամուհի, իբր զաւակ...

—Վստահ եղէք, տիկին, թէ չեմմոռնար ոչ մին այն տարօրինակ բարութիւններէն զորս ինձի համար ունեցած էք յորմէ հետէ ձեր ծառայութեան առած էք զիս։

Տիկին տը Մոնդոռան սա հաճելի բանն ունէր որ լեզուի ամենադայլն երանգները կ'ընդունէր։ Իր ընթերցողին արձակած ուղիղ ժպրհութիւններէն և վրէժխնդիր հեգնութիւններէն ոչ մին կորսուած էր իրեն համար։—Այս վերջին եւ սիրաժարկոյ պատասխանին վրայ, պառոնուհին ոտք ելած էր։ Եթէ կայծակն իր տրամադրութեան ներքեւ ըլլար, հաւանական է որ օրիորդ տը Սառատոն բոպէ մը աւելի չէր ապրեր։— Քանի որ ուրիշ բան չէր կրնար ընել, կրնար խայտառակաբար վռնտուել զայն իր տունէն։ մոքէն անցուց այդ բանը։ Բիչ մը խորհրդածելով, այդ օրինակ մեծաբեղի գործի մը բոլոր անպատեհութիւններն հասկցաւ։ Բամբասող լեզուները կրնային ամբաստանել զինքը թէ բռնաւորական եսամոլութեան զգացմամբ մը կը դիմադրէր իր պաշտպանելին ամուսնութեան, որ վերջապէս շատ յարմար եւ վայելուչ էր։ Այնուհետեւ ինչ որ ալ կարենար ընել, Պէդոբիս կը փափաքէր իր ձեռքէն։ Իր կորուստը որչափ ալ անդարմանելի ըլլար, պէտք էր համակերպիլ եւ ինքզինքն բարի կամեցողութեան մը երեւոյթն եւ արժանիքը տալ... Վերջապէս այդ յիմար ամուսնութիւնը գէթ լաւ կողմ մը ունէր։ տիկին տը Մոնդոռանը կ'ազատէր օր մը իր Բիէռրոն եղբօրորդւոյն այդ ազգատ աղջկան հետ ամուսնանալը տեսնելու տարափէն։

(Շարունակելի)

եան գրօշ կը պարզեն։ Ֆրանսացի անտեսագէտք ոմանք խորհուրդ կուտան Ֆրանսական կառավարութեան համաձայնիլ Անգլիոյ հետ։ զի եթէ Նիւֆաունտլէնտ Անգլիային բաժնուի և Միացեալ Նահանգաց յորի, ամերիկեան կառավարութիւնը չի ճանչնար իւթրէխթի դաշնագիրն, Ֆրանսացիք ամեն իրաւունք կը կորուսանեն, և ո՛և է փոխարինութիւն չեն կրնար ստանալ, մինչ այժմ Անգլիա տրամադիր է դրամական կարեւոր վճարմամբ միանգամ ընդ միշտ գնել Ֆրանսացւոց ձկնորսային իրաւունքները։

—Գ. Սթէնլի Լանտոնէ մեկնեցաւ, և Անգլիոյ գլխաւոր քաղաքները կ'այցելէ։ Ակովտիոյ մայրաքաղաքն, Էտինպուրկ, պատուոյ քաղաքացիութեան մագաղաթեայ վկայական յանձնեց իրեն։ Անոր կնայելու գնաց։ Հոն եւս նոյն պատիւն եղաւ իրեն, և այս առթիւ արտասանած բանախօսութեամբք, շեշտեց գերմանական ռանձգութեանց դէմ Արեւելեան Ափրիկէի անգլիական ստացուածքները պաշտպանելու պէտքը։

—Զօր. Լորտ Ռոլոյի հրաժարեցաւ Անգլիոյ սպայակոյտի նախագահութեան կարեւոր պաշտօնէն։ Ի գիմաց Անգլիոյ արտաքին գործոց նախարարութեան, ի մօտոյ Սուաքին պիտի երթայ, ուր նախ և առաջ խաղաղ կառավարութեան ներկայացուցչի մը հետ պիտի համաձայնի՝ Սուաքինի անգլիական և Մասուայի իտալեան իշխանութեանց միջեւ յարաբերութիւնները դիւրացնելու համար, Սոմալիի մասին, և բաց ասած, Լորտ Ռոլոյի Սուաքինց հետ բանակցութեան պիտի մտնէ, Սուաքին Գէրալէր-Խարթումի առեւտրական ուղին բաց առաջնոյն վաճառականութեան առջեւ բանալ տալու համար։ Արդարեւ Սուանահի ցեղերէն շատեր սովէ և հիւանդութիւններէ տառապած են սասակապէս, կը յուսացուի որ սիրով համաձայնին Անգլիոյ լիազօր ներկայացուցչին հետ։ Խարթումի էմիրը սակաւաթիւ կուսակիցներ միայն ունի, և իւր կողմէ ընդդիմութեան երկիւղ չկայ գրեթէ։

—Եգիպտական կառավարութիւնն էմին փաշային վճարեց եօթն տարիէ հետէ իւր չստացած թոշակներուն ամբողջ գումարն, և պաշտօնէ դադարման առթիւ գրամական հատուցում մը, ընդ ամենայն իրը երկու հարիւր հազար ֆր։ Եգիպտական կառավարութիւնն հաստատեց նաեւ էմին փաշային հանգստեան թոշակի իրաւունքը։

ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեւփոխանական վիճակաց բաշխման յանձնաժողովն երէկ առաւօտ ի նիստ գումարեցաւ ի Խորհրդարանի Ղալամիոյ ընդ նախագահութեամբ Ամէն։ Ս. Պատրիարք Հօր։

Յանձնաժողովն, որ արդէն իրեն յանձնուած օրինական ինչ ինչ կէտերու միոյն նկատմամբ իւր որոշումը տուած էր, երէկ եւս յետ երկար խորհրդակցութեանց լուսաբանեց եւ պարզեց այն օրինական կէտերն, որք կը վերաբերին երեսփոխանական վիճակաց բաշխման ցուցակի գործողութեան և որք Վարչութեան կողմէն յանձնարարեալ էին։

Յանձնաժողովն իւր պաշտօնն աւարտած ըլլալով, խորհրդակցութեանց արդիւնքը տեղեկագրով մը պիտի մատուցանէ Ազգ. Վարչութեան։

Պուքրէշէն գրուած նամակէ մը գոհութեամբ կը տեղեկանանք թէ Ռումանիոյ Կարոլ թագաւորը Ռ-մ-ն-թ-է պատուանշանի առաջին աստիճանը նուիրած է Արժ. Տ. Խաչատուր աւագ քահանայ Մոսկոֆեանի, որ յարգելի և պատուական եկեղեցական մէն է և մեծ համակրութիւն կը վայելէ Ռումանիոյ ազգայնոց մէջ։

Զմիւռնիայէն տեղեկութիւն կը ստանանք թէ Գրբգ-Ագաճի մէջ Հայոց Մասնաճիւղ Ընկերութեանց մէկ մասնաճիւղը կազմուած է պատուաւոր ազգայիններէ որք հանգանակութեան սկսած են արդէն և բաւական կարեւոր գումար մը ալ ղրկած են Ընկերութեան։

Մասնաճիւղին անդամոց անուանք են։

Մեծ. Տեարք՝

Նշան էֆ. Բարա-Խաչատուրեան Ափ-ոոդիտ, Կարապետ էֆ. Եղիվարդ Ափ-ոոդիտ, Գրիգոր էֆ. Սահակեան Գանդ-ոիտ, Թաղէոս էֆ. Յովսէփեան, Լեւոն էֆ. Շէրիսճեան, Խաչատուր էֆ. Կրպօճ, Մատաւ էֆ. Ադամեան, Կարապետ էֆ. Դարբինեան, Ղազարոս էֆ. Եանքքեան, Մելքոն էֆ. Մրճեան, Մկրտիչ էֆ Մբսրբեան, Յակոբ էֆ. Կարապետեան, Յովհաննէս էֆ. Մըսրեան, Գէորգ էֆ. Աբարքեան, Սահակ էֆ. Ղազարոսեան, Ստեփան էֆ. Ճիրվէ եան։

Գրբգ-Ագաճի ազգայնոց այս ընթացք գովութեան արժանի է եւ յուսալի է որ հետեւողներ ունենայ Զմիւռնիոյ մէջ գիւղաքաղաքաց մէջ։

ԶԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Տնօր. Խորհրդոյ Ազգ. Կենտր. Վարչութեան

Գոյանը գիւղի Ս. Երից Մանկանց եկեղեցոյ վերաշինութեան հաշուեցոյցն Գաւառաւորժան Յանձնաժողովով կողմէ Տընտեսական Խորհրդոյս ներկայացուած և անոր պատուանութիւնն հաշուետուութեան հետ բաղդատուած է։

Տեսաւ Խորհուրդս այսու պաշտօնական հաշուեցմամբ հրաւէր կը կարդայ պատուաւորժան ազգայնոց, որ եթէ նոյն շինութեան հաշուոց նկատմամբ դիտողութիւն մ'ունին, թուականս մինչեւ 31 օր պայմանաժամու մէջ ներկայանան ի Պատրիարքական Կեդր. Հանրակալ էֆ-ի ուրուն յանձնուած է նոյն հաշուեցոյցն ու հաշուետուութեան, և յետ քննութեան իրենց դիտողութիւնը ներկայացնեն Տնտեսական Խորհրդոյս։

Սոյն պայմանաժամին լրումէն յետոյ՝ որ և է բողոք կամ դիտողութիւն անսնելի պիտի մնայ։ (Ստ.)

4 Յունիս 1890

ՅՈՒՍԻՍԱԿ ԵՐԲՈՐԴ

1890 թուականի Հունիսի 1ին

Ի Դպրոց Ազգ. Հիւանդանոցի

(Մինչ ցվերջ մայիսի)

Երկրորդ ցուցակին գումարը զրչ. 15726

Բարեգութ Տեարք

Անասն և Խաչիկ Հաճեան զրչ. 864, Նշան Հարէնց 864, Գառնիկ Սարգիսեան և Եղրարք 432, Սարգիս Թաշճեան 432, Պօղոս Մանուէլեան 216, Երեւում Փափազեան 216, Մկրտիչ Ֆէրմանեան 216, Գէորգ Գրիգորեան 108, Բարեսէր Ոսն 108։

Գումար 19182 զրչ.

Ի Դիմաց Հոգ. Ազգ. Հիւանդանոցի

Ատենադպիր Ատենապետ

Տ. ԿԻՒՄԻՒՇԿԵՐՏԱՆ ՄԻՒՌ. ՅԱԿՈԲԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Պուքրէշի օսմանեան դեսպանատան երկրորդ քարտուղար անուանեցաւ Ֆէտան պէյ, երկրորդ քարտուղար օսմանեան դեսպանատան Պէլկրատի։

Հռոմի օսմանեան դեսպանատան երկրորդ քարտուղար անուանեցաւ Բիւշոտի պէյ։

Պէլկրատի օսմանեան դեսպանատան երկրորդ քարտուղար անուանեցաւ Սէրվէթ պէյ, երկրորդ քարտուղար օսմանեան դեսպանատան Պուքրէշի։

—

Երրորդ կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ Պ. Սէնատրի, քարտուղար երկրաբանական ժողովոյ եւ անգամ պատմագիտաց ժողովին Հաւնգարիոյ։

—

ՀԱՅԿԵՐՈՅԹ Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ

Երէկ, միջօրէին, կայս. Պալատան մէջ չքեղ հայկերոյթի մը տրուեցաւ ի պատիւ անգիտցի ծովակալ Սրբ ՃՀՆ Քաւմբէլի։ Սեղանին ներկայ գտնուեցան նաեւ կայս. պատուոյ բարձրաստիճան պաշտօնատարք ինչպէս նաեւ անգլիական դեսպանն ու դեսպանատան գլխաւոր պաշտօնեայք։

Հայկերոյթէն յետոյ ծովակալը քանիցս շնորհակալութիւն յայտնելով իրեն եղած պատիւներուն համար մեկնեցաւ։

—

ՊՐՈՒՍԱՑԻ ԿՈՒՍԱԿԱԼԸ

Վեհ. Սուլթանն իմանալով Պրուսայի կուսակալ Մահմուտ փաշայի յանկարծական հիւանդութիւնն, հրամայած է որ երկու ճարտար բժիշկներ յատուկ չոգենաւով անմիջապէս Պրուսա երթան, Ն. Վսեմութիւնը դարմանելու համար։

Զամկաքօ փաշա, մին այդ երկու բժշկաց, Պրուսայէն հեռագիր մը ուղղելով ծանուցած է թէ Մահմուտ փաշայի հիւանդութիւնն օձիկ է (երլանճը) որ յառաջ եկած է ականջի սասոնկ ցաւէ և թէ սկսած է ազդեցնալ։

—

ՄԱՍՂՀԱՐ ՓԱՇԱ

Բազաքապետ Մաղհար փաշա մէկ քանի օրէ ի վեր հիւանդ է։ Ն. Վսեմութեան աջ ոտքի մատին վրայ պալար մը ելած ըլլալով, Նախընթաց օր վերաբուժական գործողութիւն մը կատարուեցաւ։

Վեհ. Սուլթանն, իմանալով Մաղհար փաշայի հիւանդութիւնը, սենեկապետ Պէսիմ պէյը ղրկեց նորա պարանքն եւ որպիսութիւնը հարցնել տուաւ։

—

ՕՍՄ. ԴԵՍՊԱՆ ԱԹԷՆՔԻ

Աթէնքի օսմանեան նոր դեսպան Մահմուտ Նէսիմ պէյ այսօր Պէլկրատէն մայրաքաղաքս կը հասնի, ստոր իւր պաշտօնատեղին ուղեւորելու համար։

—

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ

Մայրաքաղաքիս անգլիական դեսպան Սրբ Ռ. Հուարդ, որ իւր կառավարութենէն արձակուրդ ստացած է, երէկ իրիկուն իւր ընտանիքով հետ Վիեննայի ճամբով Լոնտոն ուղեւորեցաւ արեւելեան ճեպընթաց կառախումբով։

Բարձր. Մեծ-Եպարքոսին կողմէ թարգման Վէքիլ էֆէնտի և Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին կողմէ թարգման Միքայէլ էֆէնտի կիւլպեան ինչպէս նաեւ անգլիական դեսպանատան գլխաւոր պաշտօնեայք Սիրքէճիի կայարանն երթալով, ողջերթի մաղթեցին դեսպանին ու դեսպանուհւոյն։

—

ՕՍՄԱՆ ՊԱՏՈՒԱՆՇԱՆԱՆ

Ռումանական կառավարութիւնը Ռ-մ-ն-թ-ի Ա-ոդ պատուանշանի մեծ ժապաւէնը նուիրած է Պատրիարքի տեղապահ և Պէլկրատի նորին տիր դեսպան Ֆէրիտուն պէյի։

Կայս. Իրատէ մը արտօնած է այդ պատուանշանի գործածութիւնը։

—

ՕՍՄ. ԲԼԺԻՆ

Բլժի Անչիմալա գրամատան տնօրէն Պ. Կիւս. Մօմիէր Օսմ. Մխանատի Բլժիի վարչական խորհրդոյ անդամ ընտրուած է հանգուցեալ Պ. Զիֆֆէրի տեղ։

—

ԲԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Վերջին օրերս եղած կայսերական իրատէ մը կը հրամայէ որ այն ջրաբաշխական մեքենան որ քանի մ'տարի առաջ Բաղաքապետութեան կողմէ Բէհչմիհանէ գրուած էր, Թերապի ու Պէշիկթաշի ջուր հայթայթելու համար (այն թուականին յորում ջրի նուազութիւնը մեծապէս զգալի էր) իսկ այսորիկ ծովային նախարարութեան ձեռամբ գործածուի, քաղաքապետեան ծախիւք։ Այս տնօրինութեան առթիւ տուող պարագան սա է որ յիշեալ մեքենան օրական փոխանակ 40 լիւլէ ջուր արտադրելու, 17 լիւլէ ջուր միայն կարտադրէ։

Այս լուրը հաղորդելու առթիւ, Մանիթեօ կը յիշէ թէ ժամանակէ մը ի վեր Բաղաքապետութեան հասոյթներու մէկ մասին վարչութիւնն ուրիշ պաշտօնատանց յանձնուած է։ Ասոնք են Տօլմա-Պաղչէի կազարանը որ այժմ աբքանի թեղանթի արանի ձեռքը կը գտնուի, վերոյիշեալ ջրաբաշխական մեքենան որ ծովային նախարարութեան անցաւ, անչարժ կալուածոց տուրքը (էմլաք վերկի)։ զոր ելմտական նախարարութիւնը կը գանձէ, նաւամարներու արհեստատանութիւնը՝ որ ծովային նախարարութեան մէկ պաշտօնատան իրաւասութեան ներքեւ կը գտնուի։ Ասոնցմէ զատ, Բաղաքապետութեան իրաւասութեան ներքեւ գտնուող դաւառակաց ելմտական գործերը Մայիսէն անցած են։ Նմանապէս այդ դաւառակաց հաշուակալութիւնը Այդ ճիւղերու բոլոր պաշտօնեայք քաղաքապետութենէն ելլելով Մայիսէն փոխադրուած են։

—

ՇԻՐՔԷԼԻԻ ԹԱՂՏԻՑԸ

Շիրքէլիի թաղտիցի վարչութեան կողմէ յայտնի յանձնարարեալ չորս չոգենաւերէ միայն չինութիւնն աւարտած ըլլալով, չորս օր առաջ ճամբայ ելեր է և երկու չարաթէն մայրաքաղաքս կը հասնի։ Միւս երեք չոգենաւք ևս քանական օր յետոյ ճամբայ պիտի ելնեն։

—

ՇԲԱԴԱՄ

Վեհ. Սուլթանը գնահատելով ծովային ջրհանկիր գօրաց վարպետն դ. ոմիլի ջանքերն զոր կը մատուցանեն ամեն հրդեհի, հրամայած է արհեստական չքաղաքաներ տալ նոյն վարպետ փոխհարիւրապետ Սալիհ էֆէնտիի, սեղակալ Լատա ու Սալիհ էֆէնտիներու և գեր-սեղակալ Իսմայիլ էֆէնտիի։

—

ՀԵԼԼԷՆԱԿԱՆ ՆԱՒԱՏՈՐՄ

Հելլենական նաւատորմը Նախորդ շաբաթուն Ազեքսանդրիոյ նաւահանգիստն հասեր է ուր երեք չորս օր մնալէ յետոյ Պիրէան պիտի դառնայ, ուստից նաւատեաց մեծագոյն մասը իրը 500 հոգի, Մարսիլիա պիտի զբաղուին նորաշէն Աբէյ- զրահաւորը բերելու համար։

Բարձր. Խեդիվը Բազ-էլ-Թինի պալատան մէջ հայկերոյթի մը տուեր է ի պատիւ հելլենական նաւատորմին հրամանատար գեր-ծովակալ Քոնսթանթէն Սաքթուրիսի և սպայից։

—

ՀՊԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Մի քանի օր առաջ, ոստիկան-գլխաւորաց հանդերձից հայթայթման համար Սպարապետի Դրան մէջ նուազուրդ կատարուած պահուն, ինդիր ծագեցաւ Պ. Ապրամ Ֆրէսքոյի (Արսլան օղլու) հպատակութեան մասին։ Համաձայն կայս. այն Իրատէին որ կը հրամայէր որ պետական հայթայթումներն առանձնոյ անձինք. օսմանեան հպատակ ըլլան, հարկ էր գիտնալ թէ Արսլան օղլու պիտի կրնա՞ր հաստատել իր այդ հանգամանքը, նկատելով որ ակիզ առաջ միւնոյն անձը ձեռնհաս դատարանաց առջեւ հաստատած էր թէ իտալական հիւպատոսարանին իրաւասութեան ներքեւ կը գտնուի։ Ցակաւին յարանի չէ թէ ինդիրն ի՛նչ ելք ունեցած է։

—

ԺԱՄԱՆԱՄՈՒՆԻՆ

Ռումանական դեսպան Պ. Միքիլինէօ երէկ առաւօտ մայրաքաղաքս դարձաւ Պուքրէշէն։

Սբր Ալիքիս Առանտրոն և Տիկին Ռանտրոն որք երկու ամսէ հետէ Բարիզ կը գտնուէին, մայրաքաղաքս դարձան եւ Թարապիոյ իրենց ամարանոցը գնացին։ Շաբաթ օրը մայրաքաղաքս հասան նաեւ անգլ. դեսպանական քարտուղար Պ. Հարտինկ և Ֆրանսական դեսպանատան թարգման Պ. Հիւար։

—

ՈՃԻՐ ԵՒ ՀՐԶԻԳՈՒԹԻՒՆ

Անցեալ հինգշաբթի գիշեր Շէշհանէ պահականոցին դէմ, Եէնի Եոլ փողոցին վրայ պատահած հրդեհն ու անոր սկզբնապատճառ եղող սճրագործութիւնը, զոր պատժեցինք ուրբաթ առաւօտ, զանազան կերպերով կը մեկնուին։ Թէպէտ սա սոյդ է թէ մեծապատիւ Եանի Քօքինի որդին՝ Նիքոլի սպանուած է և այս սպանութիւնը ծածկելու համար սճրագործը կրակ ձգած է խանութին մէջ, սակայն որովհետեւ այդ սպանութեան պահուն խանութին մէջ երկու հոգի կը գտնուէին, Զախարիա (մեծապատիւն ընկերը) և Սավա (աշակերտը), այս երկուքն ալ հաւատարապէս ամբաստանութեան ներքեւ կը գտնուին ու կը հարցաքննուին։

Աւասիկ հարցաքննութեանց մէջ երեւան եկած պարագայք։

Զախարիա և Սավա, որք իրրեւ Նիքոլիի սպանիչները ձերբակալուած են, հարցաքննուելով, Զախարիա յայտարարած է թէ ինք քնացած տաեն ոտքի ձայն մը կ'առնու և աչքերը բանալով կը տեսնէ Սաւան. Նիքոլիի հօրը հօրեղբօրորդին, որ իրենց հետ խանութին մէջ կը պառկէր։ Սաւա մէկ ձեռքը լամպար մը և միւս ձեռքը խոշոր դանակ մը սեղեակը կը մտնէ և կամաց կամաց Նիքոլիի անկողնոյն կը մօտենայ։ Հոն լամպարը գետինը կը դնէ և ծնգան վրայ գալով մէկ ձեռքով Նիքոլիի կոկորդը կը բռնէ և միւս ձեռքով դաշոյնն երեք անգամ տնոր կուրծքը կը մխէ։ Յետոյ սպանեալը վերմակին մէջ փաթթելով, լամպարը կ'առնու և վար կ'իջնէ։

Ըստ յայտարարութեանց Զախարիայի, Սաւա քիչ յետոյ չիչ մը քարիւղ ի ձեռին ունենակ կուգայ և քարիւղն ատա անդ սրսկելէ յետոյ կը բռնեցնէ և կ'երթայ։

Զախարիա զայս տեսնելով, կ'սկսի աղաղակել և քիչ յետոյ կուգան սպանելոյն հայրը մսագործ Եանի Քօքինի, Թանաչ անուն մարդ մը և Սաւա։ Սաւա Նիքոլիի մարմինը խանութին դրան առջեւ կը տանի և ինք ալ քովը կը նստի։ Կը հարցնեն իրեն թէ Նիքոլի ի՞նչու չարթնար, կը պատասխանէ թէ հիւանդ է։

Հայրն անմիջապէս իւր որդւոյն քով երթալով վերմակը կը բանայ և տեսնելով իւր որդին արիւնաթաթաւ, անմիջապէս Վէյվոտայի պահականոցը կը տանի և Զախարեան ու Սաւան ձերբակալել կուտայ։

Բէյիկ Լուճիճի էֆէնտի գիւղը քննելով երեք վէրքեր գտած է և մարմնոյն եռեւի կողմը բոլորովին բացուած։

Սաւա հարցաքննուելով թէեւ ուրացած և Զախարիան ամբաստանած է, սակայն կը կարծուի թէ ինք է այդ ոճրին հեղինակը, որովհետեւ Նիքոլիի 130 դրուշն իւր գրպանէն գտնուած է։

Բնոյի ոստիկանութիւնը պահած է սճրագործութեան պահուն գործածուած դանակն և սպանելոյն ու ոճրագործին հագուստները։ Քննութիւնք առաջ կը տարուին։

—

ԳՈՂՈՒԹԻՒՆՔ

Կիրակի գիշեր, Բանկալթիի չիտակ համրան վրայ գտնուած փերեզակի մը խանութը գողեր մանելով, 10-12 ոսկւոյ արժողութեամբ ապրանք գողցան։

Շաբաթ գիշեր եւս Սագրդ-Աղաճէն վար՝ Գարբուզ փողոցը բնակող վարսայարդարի մը տունը գողեր մտան, պատուհանին երկաթեայ վանդակները կոտրելով, և ի մէջտեղ, ժամացոյց մը ու այլ մանր նիւթեր յափշտակելով փախան։ Ասուստուն միայն խմացուեցաւ գողութիւնը։ պատուհանին տակ գտնուեցաւ կասկածելի դրացնի մը թաշկինակը։ ոստիկանութիւնը խուզարկութիւններ կատարեց այդ տան մէջ, և թէպէտ բան մը չգտաւ, սակայն թաշկինակին տէրը բռնատրկած է։

—

Մերսոսթայէն կը գրեն թէ կառավարական պաշտօնատան մէտ գտնուած չէնքն, որ պահեստի գինուորաց հրամանատարին պաշտօնատունն էր և վերջերս այրած, վերստին շինուեր է։ Այդ առթիւ վաճառական Մկրտիչ էֆէնտի Մուխթարեան ձրիաբար հայթայթած է չէնքին համար հարկ եղած ապակիներն և երկաթագործ Նշան ագա ձրիաբար նորոգած է այրած չէնքին պատուհանի երկաթներն ու դռները։

—Պոլսոյ Մաքսատան Պահէն Դարուի կողմէ գտնուած դրան վրայի փայտակոյ չէնքն ինչպէս նաեւ նոյն դռնէն մանելով աջ կողմէ գտնուած ներքին ապրանքներու մթերանոցը կը փլցուին, անոնց տեղ նոր չէնքեր կառուցանելու համար։

—Սէլանիկէն կը գրեն թէ երաշտութեան պատճառաւ մէկ քանի գաւառաց երկրագործք արգահատելի վիճակի մէջ կը գտնուին։ Կայս. կառավարութիւնը թէեւ հինգ հազար ոսկւոյ չափ գումար մը փոխ տուած է երկրագործաց սակայն երկրագործաց վիճակը բարւոքելու համար ագկից աւելի գրամի մը պէտք պիտի ըլլայ։ Թոսի գինն ևս բարձրացած ըլլալով, կը փոխցուի թէ մի գուցէ անասնաց նկատմամբ գէշ հետեւանքներ ունենայ։

—Զմիւռնիայէն առնուած տեղեկութեանց համաձայն Գոճայի եւ Սէյտիքէյի բոլոր այգիներուն մէջ որթալուիճ երեւան ելեր է։ Այդպէսանքյուսահատած են, զի անկարելի է եղեր ոեւէ ազդու միջոց ձեռք առնուլ այդ արկածին դէմ։

—Քիւշիկ Զէքմէճէէ կը գրեն թէ Սթամբի անուն քսանամեայ երիտասարդ մը վեց տարեկան Անիքա անուն աղջկան մը պատիւը բռնաբարեր է և թէ ոստիկանութիւնն իմանալով ձերբակալեր է այդ երիտասարդը։

—Պոլսոյ պատժական տատանը մէկ ամսուան բանտարկութեան դատապարտեց Ահմէտ անուն մարդ մը, որ իւր մայրը ծեծած էր։

—Արքունի նաւարանին մէջ գործարան մը հաստատուած է խողովակներու պատրաստութեան համար։ Հարկ եղած գործասեղաններն ու գործիքները բերուած ըլլալով, գործարանն ի մօտոյ պիտի սկսի բանիլ։

—Զմիւռնիոյ լրագիրք կը պատմեն թէ հինգ աւազակներ Սարգիսլի կողմը թրքատարի մը վրայ յարձակելով, թրքատարը ծանրապէս վիրաւորեր և 150 մէճիտիյէ յափշտակելով փախեր են, սակայն տեղական կառավարութիւնն յաջողած է ձերբակալել զանոնք։

—Կիրակի օրը ժամ 12ին Պոլսոյ Մուսալա թաղի Թոփրաք փողոցին մէջ փայտաշէն հին տուն մը փլաւ։ Տեսնողք ողջ առողջ ազատեցան, սակայն կարասիները փլատակաց ներքեւ մնացին։

Նոյն օրն Էյուրնէ Գարուի կողմը եւս փայտաշէն հին տուն մը փլաւ ինչպէս նաեւ ի Պալատ ծովեզրին մօտ փոքր մզկիթ մը։ սակայն մարդու կորուստ չպատահեցաւ։

—Երկկ ձիպալիի ագլեւ մակոյկ մը մարդոյ տասն և վեց տարեկան ձէմալ անուն տղայ մը ծովն ինկաւ, սակայն անմիջական օգնութեանց շնորհիւ ազատուեցաւ։

—Նախընթաց օր Պօղոս և Յարութիւն անուն երկու խաստիղցիներ երբ Ունքաքանէ նաւակ կը նստէին, երկու անծանօթ անձինք յանկարծ նաւակին մէջ նստուեցան, որով նաւակը շրջեցաւ և Պօղոս ու Յարութիւն ծով ինկան, սակայն նաւավարք օգնութեան փութալով երկուքն ալ ազատեցին։

—Զմիւռնիոյ լրագրաց մէջ կը կարդանք թէ Գրբգաղաճի մէջ կատղած շուն մը յոյնի մը վրայ յարձակելով ձեռքը խածեր է։ Յոյնն եւս քիչ յետոյ կատղելով բեռնակրի մը թեւը խածեր և մեռեր է։ Բեռնակիրը կը դարմանուի եղեր։

—Պասրայի լրագրոյն մէջ կը կարդանք թէ կառավարական երկու պաշտօնեայք գետի մը եղերաց վրայ երկու գլուխ ուղեցող օձի մը հանդիպեր և սպաններ են զայն։ Տասը քայլ հեռուն ուրիշ օձ մը ևս տեսնելով զայն ևս սպաններ են։ Կարծուի թէ այդ օձեր անապատներէն եկած են գետին հոսանքին բռնուելով։

ՀԵՒԱՒԵՐԱԼՈՒՐԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ ԴՐՈՒՇԱԿԱԼՈՒԹԻՒՆԷՆ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՓԻՇԹԱ 16 Յունիս.— Մաքսատան պատուիրակութեան արտաքին գործոց յանձնաժողովն հաստատեցաւ Տքթ. Մաքս Ֆալքի տեղեկագրին, որով հաստատութիւն կը յայտնուի ցայս վայր հետեւուած արտաքին աշխարհագրութեան, և փոփոխութիւն կը ցուցուի Քաղնոքի կոմսին։ Յանձնաժողովը կը յուսայ թէ կոմս Քաղնոքի, յարգելով Վեհ. Սուլթանին գերիշխանութեան իրաւունքն, ամէն պատուէ աւելի պիտի ջանայ իշխանին ճանաչում մը մերձցնելու, եթէ ոչ ուրիշ կերպիւ գէթ բարեկամական խորհրդովք։ Աւստրիոյ գէմ Սերպիոյ հանրային կարծեաց ոչ-բարեկամական ընթացքն ակնարկելով, դիտել կուտայ տեղեկագիրը թէ Քաղնոքի կոմսին բանախօսութեամբ տրուած առաջին ազգարարութիւնը բաւական բարեկամական յայտարարութիւններ ընել տուու սերպ կառավարութեան։ Եկր յուսանք որ սերպ կառավարութեան արարք իւր յայտարարութեանց պիտի համապատասխանեն։ Աւստրիա-Հունգարիա կը յարգէ Սերպիոյ անկախութիւնն, և միշտ հաշտ աշքով պիտի դիտէ բարեկամական յարաբերութեանց մշակումը Սերպիոյ և ուրիշ ո՛և է Տէրութեան միջեւ։ Բայց Աւստրիոյ-Հունգարիոյ բարեացակամ ընթացքը Սերպիոյ մասին կասկած ունի Սերպիոյ փոխադարձ բարեկամական ընթացքէն։

ՊՈՒԿԲԻՇ, 16· —Յունաստանի գործակատարը Սինայիայի ամարանոցը գնաց՝ Ռումանիոյ գահաժառանգ իշխանին յանձնելու Ս. Փրկչի հելլենական պատուանշանին մեծ ժապաւէնը։

ՎԱԼԵՆՍԻԱ (Սպանիա), 16 Յունիս.— Պաշտօնական տեղեկագիրք կը հաստատեն թէ ինն հոգի բռնուած են հիւանդութեան մը, որ կը կասկածուի թէ քոլերա է։ Արդէն երէկ և նախընթաց օր մէկ քանի հոգի բռնուած էին այդ հիւանդութենէն։

ԲԱՐԻԶ, 16.—Աւեւտրական նախարարութեան բարձրագոյն խորհուրդն այսօր պիտի սկսի խորհրդակցիլ առեւտրական դաշնագրաց լուսէն յետոյ հետեւելիք անեւսագիտական գրութեան վրայ։

ՀԱՒՍ, 16.— Գահաժառանգ իշխանն ատ վերադարձաւ։

ՊԵԼԿՐԱՏ, 16· — Աթէնքի օսմանեան նոր դեսպան Մահմուտ Նէսիմ պէյ այսօր իր պաշտօնատեղին մեկնեցաւ կ. Պոլսոյ ճամբով, Իրեն յաջորդ Ֆէրիտուն պէյ ատ հասաւ։

—Լրագիրք կը ծանուցանեն թէ Միլան թագաւոր մտադիր է իր բնակութիւնն հաստատել ի Պելկրատ։

ՍՈՖԻԱ, 16·—Անձնական անհամաձայնութեանց պատճառաւ, Պ. Մգրանովի եւ Պ. Սաւպաշէֆի նախարարներն հրաժարական տուին, որ ընդունուեցաւ Իշխան-Նէն։ Նախարարապետ Պ. Ազամպուլոի իր վրայ առաւ արտաքին գործոց նախարարութիւնն եւ Պ. Ժիվքոֆի՝ եկեղեցոյ նախարարութիւնը։

ԴՊԱՄԱԿԱՆ

ՂԱՀԱՏԻՈՅ ՊԱՐՍԱ

Ղալաթիա, 5 Յունիս.

Սամանեան Քանապիտ

Արեւ երեկոյ	Սեպտ.	21 16
Լուսոյն գրգռումն	»	21 15
Ներքոյ մէջ	»	— —
Աւուրան բացուելու	»	21 13 1/2
Կէս գիշեր	»	21 12 1/2

ԻՍԼԱՄԻ ԳԻՇԵՐՈՒՆ ՏՈՆԵՐԸ

Արեւ երեկոյ		60 22
Լուսոյ տարածում		60 12
Կէս գիշեր		60 22

ԸՆԹԱՑԻԿ ԱՐՈՒՆԹԻՒՆՔ

Բարձրագոյն Թիւ	Ա. Սեպտ.	45 1/2
»	Բ. »	26 3/8
»	Գ. »	21 19

ՍԱՒԱՆԱՏՈՒՄԻՆ

Սուանահի Լեռներուն	Սեպտ. Լ.	5 12
Գրանի Լեռներուն	Սեպտ. »	10 2
Գանդ ու Գանդ	» »	7 18
Սուս Շանի Լեռներուն	» »	5 4
Թրամանէ	» »	500
Բուլ Մէջ Երկրագործ	Սեպ.	82
Սամանեանցի Լանգնամ	Գ. Կ.	144

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԳԻՆԵՐ

Բարձր, 16 Յունիս, Ժամ 3 վայր 30 երեկոյ

Դրամատական Ռանտի 3 %		92 90
» » 4 1/2 %		106 80
Օսմանեան քանոնիսէ Սէրի Դ.		19 50
Օսմանեան Երկաթուղի		82 75
» Բէյճիի քանոնիսէ		2 5
Գանդ Ամանաթ		611 87 1/2
Գրեան Լիման		750
Սուրա ու Ռանտի 5 %		96 97 1/2
Եգիպտական 5 %		488 75
Բրնտրիթէ Թիւրք (1890)		420
Եգիպտական Միացեալ		492 50
Գանդ ու Բարի		840
Օսմ. Մաքս. արժեթուղթ		469 37 1/2
Սուէզի Ջրանցք		2357 50
Սպանիական պարարտ		77 1/2
Զէր Լիմանի վրայ		25 18
Լանտոն, 16 Յունիս, Ժամ 3 վայր 20 երեկոյ		
Ռնդ. քանոնիսէ		97 1/2
» » Սէրի Դ.		19 9/16
» » » Ա.		45 1/16
» » » Բ.		26 3/8
» » » Գ.		19 7/16
Օսթրանուգիա 1877		105 1/4
Գանդ Օթոման		14 3/16
Եգիպտական Միացեալ (Իւնիֆիտէ)		97 7/16
» » (Բրիմիէ)		102 3/8
Ջրանցք Սուէզի		86 3/16
Ջոհանիսպուրգ (փոխառ. Բոչիլը)		103 1/4
Հելլենական 5 %		95 5/16
Մանտրաս »		80
Լուսական 1889		98 1/2
Փոխառութիւն Բարիզի վրայ		25 16 1/2
Վիեննա, 16 Յունիս, Ժամ — վայր —		
Լոմանեան Երկաթուղի		88 40
» Բէյճիի քանոնիսէ		121 75
Փոխառութիւն Լոնտոնի վրայ		117 80
Պերլին, 16 Յունիս, Ժամ — վայր —		
Փոխառութիւն Լոնտոնի վրայ		20 85
Բուլ Թրթատրամ		234 25
Օսմանեան Երկաթուղի		81
Օսմանեան քանոնիսէ Սէրի Դ.		19 30

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ ԸՆԿ. ՊՐՈՒՍԱՅԻ

Աւէ-Եբլի 28 մայիսի թուոյն մէջ Մկրտիչ էֆէնտի Շահնազար գրական նպաստամատոյց ընկերութեանց վրայ նուիրած մի յօդուածին մէջ ընթերցողին կը հարցնէ թէ տեղեկութիւն ունի՞ Պրուսայի Ուսումնասիրաց ընկերութեան վրայ։ Ի մօտոյ ճանչնալով այն ընկերութիւնը՝ Շահնազար էֆէնտիի հարցը ինձ կը թելադրէ քանի մը բան ըսել անոր վիճակին, նպաստակին ու յարակից հանգամանաց վրայ, կարողագունից թոյլով աւելի ընդարձակ գրել այդ մասին

